ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մարտի 2021 թվականի N 421 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 2-Ի N 86-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 11-րդ հոդվածի 5-րդ մասով ու «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայող-ների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 86-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) որոշման նախաբանը «օրենքի» բառից հետո լրացել «2-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի,» բառերով.

2) որոշման 1-ին կետում՝

ա. 1-ին ենթակետը «ներկայացնելու» բառից հետո լրացնել «, կամավորագրված անձի կողմից մարտական գործողություններին մասնակցության մասին տեղեկանք տալու» բառերով,

բ. 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող կամ զոհված (մահացած) զինծառայողի ծնողի, ամուսնու և (կամ) զավակի (զավակների) դիմումի հիման վրա իրենց վճարած (իրենց եկամուտներից հարկային գործակալի պահած) դրոշմանիշային վճարի գումարներն ամբողջությամբ կամ մասնակիորեն վերադարձնելու կարգը՝ համաձայն N 3 հավելվածի.».

3) որոշումը 1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին կետով.

«1.1. Սահմանել, որ սույն որոշման N 1 հավելվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետի հիման վրա զինծառայողի և շահառուի (շահառուների) նույնականացումն ապահովելու նպատակով բնակչության պետական ռեգիստրը վարող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը (Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը) միմյանց հետ փոխհամաձայնեցված կարգով և ձևաչափով «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքով նախատեսված հատուցման հիմնադրամին է տրամադրում բնակչության պետական ռեգիստրում հաշվառված անձի՝

1) հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը, անձը հաստատող փաստաթղթի տեսակը, սերիան և համարը, տալու օրը, ամիսը, տարեթիվը, վավերականության ժամկետը, անձը հաստատող փաստաթուղթը տալու համար հիմք հանդիսացած փաստաթղթի (առկայության դեպքում) տեսակը, սերիան և համարը.

2) անունը, ազգանունը, հայրանունը, սեռը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, իսկ մահվան դեպքում՝ մահվան օրը, ամիսը, տարեթիվը՝ առկայության դեպքում.

3) քաղաքացիությունը (երկքաղաքացու դեպքում՝ նաև այլ պետության քաղաքացիությունը), օտարերկրյա քաղաքացու դեպքում՝ կարգավիճակը (կացության կարգավիճակը կամ փախստական լինելը), քաղաքացիություն չունենալու դեպքում՝ կացության կարգավիճակը.

4) Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակության վայրի հասցեն, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս բնակվելու (Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում օտարերկրյա պետության բնակության վայրի հասցեով հաշվառված լինելու) դեպքում՝ օտարերկրյա պետությունում բնակության վայրի հասցեն.

5) սույն կետի 1-4-րդ ենթակետերում նշված տվյալներում կատարված փոփոխությունները:».

4) որոշման N 1 հավելվածում՝

ա. վերնագիրը «ներկայացնելու» բառից հետո լրացնել «, կամավորագրված անձի կողմից մարտական գործողություններին մասնակցության մասին տեղեկանք տալու» բառերով,

բ. 2.1-ին կետի երկրորդ նախադասությունում «Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը կամավորական հիմունքներով ներգրավելու» բառերը փոխարինել «մարտական գործողություններին մասնակցության» բառերով, իսկ «կողմից» բառից հետո լրացել «՝ համաձայն N 2.1 ձևի» բառերով,

գ. 2.1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2.2-րդ կետով.

«2.2. Օրենքով սահմանված կամավորագրված անձի դեպքում մարտական գործողություններին մասնակցության մասին տեղեկանքը տրվում է կամավորագրված անձի զինվորական հաշվառումն իրականացնող կամ իրականացրած (եթե կամավորագրված անձն օրենքով սահմանված դեպքերում հանվել է զինվորական հաշվառումից)՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության համապատասխան տարածքային ստորաբաժանման կողմից՝ հաշմանդամություն ունեցող զինծառայողի կամ օրենքով սահմանված այլ շահառուի դիմումն այդ ստորաբաժանումում սահմանված կարգով մուտք լինելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում: Եթե կամավորագրված անձի կողմից մարտական գործողություններին մասնակցության հանգամանքի, ժամկետի և վայրի վերաբերյալ համապատասխան տարածքային ստորաբաժանումում առկա չեն տվյալներ, ապա դրա մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացվում է դիմումատուին, իսկ տեղեկանքը տրվում է դիմումը մուտք լինելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Կամավորագրված անձի կողմից

մարտական գործողություններին մասնակցության հանգամանքի, ժամկետի և վայրի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը համապատասխան տարածքային ստորաբաժանումն ստանում է զորամասեր կատարված հարցումների միջոցով: Տեղեկանքը կազմվում է երկու օրինակից, առաջին օրինակը տրվում է դիմումատուին, իսկ երկրորդ օրինակը պահվում է համապատասխան տարածքային ստորաբաժանումում:»,

դ. 4-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) հիմք ընդունելով ստացված դիմումը, կից փաստաթղթերն ու տեղեկությունները (ներառյալ դեպքի վերաբերյալ օրենքի 2-րդ հոդվածի 6-րդ մասում նախատեսված՝ մինչդատական վարույթ իրականացնող մարմնի տրամադրված տեղեկությունները)՝ ծրագրային գործիքի միջոցով՝

ա. զինծառայողին և շահառուին (շահառուներին) նույնականացնում է բնակչության պետական ռեգիստրում և կազմում է հաշմանդամություն ունեցող զինծառայողի կամ զոհված (մահացած) կամ անհայտ կորած զինծառայողի հատուցման իրավունքի էլեկտրոնային գործ,

բ. էլեկտրոնային գործում ներառում է դիմումատուի ներկայացրած տեղեկությունները, ինչպես նաև սքանավորման միջոցով, ներկայացրած փաստաթղթերը՝ բնօրինակ փաստաթղթերը վերադարձնելով դիմումատուին,

գ. հատուցման դեպքի վերաբերյալ տեղեկությունները և շահառուների անվանացանկը՝ համաձայն NN 3 և 4 ձևերի, էլեկտրոնային եղանակով ուղարկում է հատուցման հիմնադրամին:»,

ե. 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Սույն կարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետում նշված ծրագրային գործիքն սպասարկում (վարում) է հիմնադրամը, իսկ էլեկտրոնային գործում ներառված տեղեկությունները հասանելի են հիմնադրամին:»,

զ. 8-րդ կետը «ձևաչափով» բառից հետո լրացնել «(ծրագրային գործիքի միջոցով)» բառերով,

է. N 2 ձևից հետո լրացնել նոր՝ N 2.1 ձևով՝ համաձայն N 1 հավելվածի,

ը. NN 3 և 4 ձևերի 2-րդ սյունակից հանել «Զորամասը,» և «վայրը և պատճառը» բառերը,

թ. N 3 ձևի 3-րդ սյունակից հանել «և հաշմանդամ ճանաչելու վերաբերյալ ԲՍՓՀ տեղեկանք տալու օրը, ամիսը, տարին, համարը,» բառերը,

ժ. ուժը կորցրած ճանաչել N 3 ձևի 4-րդ սյունակը, N 4 ձևի 3-րդ և 4-րդ սյունակները.

5) որոշման N 3 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 2 հավելվածի.

6) որոշման N 4 հավելվածի՝

ա. 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Շահութահարկի հաշվարկի և (կամ) շրջանառության հարկի հաշվարկի և (կամ) միկրոձեռնարկատիրության սուբյեկտի իրացման շրջանառության վերաբերյալ հաշվետվության հիման վրա հարկային մարմինը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար առանձնացնում է դրոշմանիշային վճարների գումարն ամբողջությամբ փոխանցած անհատ ձեռնարկատերերին ու նոտարներին և այդ գումարի վճարման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում սույն կետում նշված դրոշմանիշային վճարներն ինքնուրույն վճարողների ցուցակը՝ կազմված սույն կարգի N 1 ձևի համաձայն, տրամադրում է հատուցման հիմնադրամին:»,

բ. 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Սույն կարգի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերում նշված ցուցակները հարկային մարմնի կողմից հատուցման հիմնադրամին կարող են տրամադրվել Ընդարձակ նշման լեզվի (XML) ձևաչափով՝ ներառելով սույն կարգի N 1 ձևում սահմանված տվյալները:»,

գ. N 1 ձևը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

« Ձև N 1

ԴՐՈՇՄԱՆԻՇԱՅԻՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

Հարկային մարմնից տրամադրվող տեղեկատվությունը				
Ամսաթիվը				
Հանձնարարականի հերթական համարը				
ՀՎՀՀ-ն				

Ա/Ձ, նոտարի, կազմակերպության անվանումը				
ՀԾՀ-ն	Անունը	Ազգանունը	Հաշվետու ժամանակաշրջանը	Դրոշմանիշային վճարի գումարը

»:

2. Սահմանել, որ մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 86-Ն որոշման N 3 հավելվածի 4-րդ կետը, 5-րդ կետի երկրորդ պարբերությունը, NN 1 և 4 ձևերը գործում են մինչև 2021 թվականի ապրիլի 30-ը ներառյալ և ուժը կորցրած են ճանաչվում 2021 թվականի մայիսի 1-ից, ինչպես նաև որոշման N 3 հավելվածի 4-րդ կետում նշված ֆիզիկական անձը հատուցման հիմնադրամին դիմում կարող է ներկայացնել մինչև 2021 թվականի ապրիլի 30-ը ներառյալ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

26.03.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ